ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԶԱՐԹՈՆՔԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЗАРТОНКИ ГЮГАПЕТАРАН

գ.Զարթոնք
հեռ. 093-18-56-92

Թիվ 136

05 Դեկտեմբերի 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
պրն. Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնք գյուղական համայնքի ավագանու թիվ 2 արտահերթ նիստի որոշումները կայացած 03.12.2012թ.:

Առդիր 8 թերթ:

Զարթոնք համայնքի ղեկավար՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ

Մուտք թիվ 10893-12
«06» 12 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 03 » Դեկտեմբերի 2012թ թիվ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնք գյուղական համայնքի ավագանու 2012 թվի Դեկտեմբերի 3-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Մելքոնյան Ժորիկ
2. Համադյան Զաղա
3. Ավդալյան Կոտե
4. Սարգսյան Խաչիկ
5. Մելքոնյան Գևորգ

Զարթոնք համայնքի ղեկավար Պ.ՍԱՐԳՍՅԱՆ

գ.Զարթոնք
«03» Դեկտեմբերի 2012թ.

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի
ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ/

3. 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 03 » Դեկտեմբերի 2012 թ. Թիվ 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Արմավիրի մարզի Զարթոնք համայնքի տարածքում 2013թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության անցնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդ տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

1. Մելքոնյան Ժորիկ ----------
2. Համադյան Զաղա ----------
3. Ավդալյան Կոտե ----------
4. Սարգսյան Խաչիկ ----------
5. Մելքոնյան Գևորգ ----------

Զարթոնք համայնքի ղեկավար՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

գ.Զարթոնք
« 03 » Դեկտեմբերի 2012թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ.

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսան հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1/ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար տաս հազար դրամ:
2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տաս հազար դրամ:
5. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ:
2) հեղուկ վառելի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ.
7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24-00 -ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
1) առևտրի օբյեկտների համար քսանհինգ հազար դրամ,
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,
3)բաղնիքների (սաունաների) համար երկու հարյուր հազար դրամ,
4) խաղատների կազմակերպման համար հինգ հարյուր հազար դրամ,
5) շահումով խաղերի կազմակերպման համար երկու հարյուր հիսուն հազար դրամ,
6) վիճակախաղերի կազմակերպման համար մեկ հարյուր հազար դրամ,
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը, մինչև 20 ծավալային տոկոսի արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,
2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,
3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ,
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար դրամ:
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:
11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
13. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել երեք հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 03 » Դեկտեմբերի 2012թ. Թիվ 3-Ն

2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 - րդ հոդվածի 2 – րդ մասի առաջին կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնքի գյուղական համայնքի ավագանու 2011թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 10 արտահերթ նիստի „2012 թվականի Զարթոնք համայնքի բյուջեն հաստատելու մասին„ թիվ 3-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ հաշվի առնելով հողի սեփականատիրոջ մահվան կամ երկարատև բացակայելու փաստը համայնքի բյուջեի եկամտային մասի հողի հարկից պակասեցնել 378,8 հազ.դրամ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների.
   06/3/1 – 4264 հոդվածից պակասեցնել 300,0 հազ.դրամ
2. Համայնքի բյուջեի եկամտային մասի փոխադրամիջոցների գույքահարկը ավելացնել 78,8 հազ.դրամով և հատկացնել պահուստային ֆոնդ:
3. **Վարչական բյուջեի պ/ֆոնդին ավելացնել 528,5 հազ.դրամ՝**
   01/1/1 – 4214 հոդվածից պակասեցնել - 150,0 հազ.դրամ
   01/1/1 – 4264 հոդվածից պակասեցնել - 250,0 հազ.դրամ
   01/1/1 – 4269 հոդվածից պակասեցնել - 28,5 հազ.դրամ
   01/6/1 – 4213 հոդվածից պակասեցնել - 100,0 հազ.դրամ
4. **Վարչական բյուջեի պ/ֆոնդից 528,5 հազ.դրամ ավելացնել հետևյալ հոդվածներին՝**
   01/1/1 – 4111 հոդվածին ավելացնել - 428,5 հազ.դրամ
   10/4/1 – 4729 հոդվածին ավելացնել - 100,0 հազ.դրամ
5. **01/1/1 – 5121 հոդվածից 425,7 հազ.դրամը տեղափոխել 01/1/1 -- 5122 հոդվածին:**
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝
1. Մելքոնյան Ժորիկ ----------
2. Համադյան Զաղա ----------
3. Ավդալյան Կոտե ----------
4. Սարգսյան Խաչիկ ----------
5. Մելքոնյան Գևորգ ----------

Զարթոնք համայնքի ղեկավար՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ

03 Դեկտեմբերի 2012թ.
գ.Զարթոնք

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի
ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՆ

Ց Ո Ւ Ց Ա Կ

Մահացած հողի սեփականատերերի

1. Մխիթարյան Կարապետ	6070 դրամ
2.Մելիքսեթյան Ռուբիկ	3710 դրամ
3. Ղազարյան Գուրգեն	11691 դրամ
4. Մկրտչյան Դունյա	6509 դրամ
5. Պողոսյան Արթուր	13202 դրամ
6. Գահամալյան Աստղիկ	13539 դրամ
7. Գևորգյան Վիլիկ	3478 դրամ
8. Մկրտչյան Հենրիկ	15868 դրամ
9. Համաղյան Փերո	3160 դրամ
10. Ջնդոյան Սիաբանդ	50161 դրամ
11. Ամոյան Միրալի	15695 դրամ
12. Սահակյան Մեղա	8972 դրամ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՏՆԵՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի
ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՆ

Ց Ո Ւ Ց Ա Կ

Հանրապետությունից երկարատև բացակայող հողերի սեփականատերերի

1. Աղամյան Սոնա	2242 դրամ
2. Վարդանյան Մարիամ	7614 դրամ
3. Մահմուդյան Յուրիկ	3550 դրամ
4. Նադոյան Սլո	6196 դրամ
5. Սուլթանյան Զեյթուն	2217 դրամ
6. Ամոև Մրազ	3383 դրամ
7. Ախմեդով Թինա	10605 դրամ
8. Թամոյան Ռոստամ	22812 դրամ
9. Ախմեդով Զեյնաբ	13052 դրամ
10. Մահմուդով Սոսն	16467 դրամ
11. Դուքոյան Սվետլանա	22679 դրամ
12. Բշարյան Նազե	16173 դրամ
13. Սուլթանյան Ռոստամ	15361 դրամ
14. Սուլթանյան Իշխան	18282 դրամ
15. Սուլթանյան Նադիր	3000 դրամ
16. Շամոյան ֆարզ	6477 դրամ
17. Շամոյան Մերավ	4545 դրամ
18. Պապոյան Նվարդ	22234 դրամ
19. Զնդոյան Աբո	29830 դրամ